Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 514 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
««ԻՋԵՎԱՆԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի 2-ՐԴ ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է վերանորոգել «Իջևանի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 2-րդ մասնաշենքը, որի արդյունքում կստեղծվեն հարմարավետ պայմաններ մանկապարտեզի 120 սաների առօրյան կազմակերպելու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայ օգնության ֆոնդ, Նյու Յորք, ԱՄՆ
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, քաղաք Երևան 0010, Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ 02517115
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ, քաղաք Իջևան, Բլբուլյան փողոց, շենք 5 Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	76,841,139 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Իջևանի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի հուլիսի 11-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է • Հատակների և պատերի ծածկույթի, դռների և պատուհանների, տանիքի ծածկի քանդման աշխատանքներ • Մասնաշենքերը կապող միջանցքի պատերի և տանիքի կառուցում • 2-րդ մասնաշենքում միջնապատերի կառուցում • Դռների և պատուհանների տեղադրում • Աստիճանների մետաղական բռնաձողերի տեղադրում և ներկում • Նոր հատակների կառուցում, • Գոյություն ունեցող փայտե հատակների նորոգում, հղկում և լաքապատում

		• Ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ • Ջեռուցման, օդափոխության, ջրամատակարարման, էլեկտրոմոնտաժային և հակահրդեհային ահազանգման համակարգերի մոնտաժում Բյուջե՝ 76,841,139 դրամ Ժամկետ՝ 2022 թվականի հուլիսի 11-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Իջևանի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 2-րդ մասնաշենքի շինվերանորոգման աշխատանքների իրականացում - 76,841,139 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցելու է Տավուշի մարզպետարանի և Իջևանի համայնքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է Հայ օգնության ֆոնդի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

14.07.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ